Шерлер
53

№ 34

Uepkeff
№ 53

1883

264
Ս-81
Սևրեփ.
53
2 Ո Ռ2
ՍԵՐԵԲՐԻԱԿԵԱՆՑ

ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԹԻՒ ՊԱՏԱՐԱԳԻ

Դպիրն երբ մատուցանէ քահանային զշապիկն և զայլ զգեստն, ասէ.

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա:

Յետ զգենլոյ քահանային զամենայն զգեստն՝ համբուրել դպրին զձեռս քահանային, և առեալ զխորհրդատետրն 'ի ձեռս՝ երթայ 'ի խորանն յառաջոյ քահանային. և 'ի հասանելն անդր՝ երկրպագէ ընդ քահանային, և եդեալ զխորհրդատետրն 'ի ձախակողմն սեղանոյն՝ վառէ զմոմեղէնս, և ծունր դնէ յաջակողմն քահանային:

Քահանայն ներքև ասէ. Եւ վասն սրբուհւոյ աստուածածնին:

Դպիրն պատասխանէ. Սուրբ զաստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր 'ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր. ամենակալ տէր աստուած մեր, կեցո և ողորմեա:

ՔՀ. Ընկալ տէր. և այլն:

ԴՊ. Ողորմեսցի քեզ աստուած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն և այժմուս, և յառաջա-

1853

կայէն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ 'ի հանդերձեալ կեանս. Ամէն։

Քհ. Աղաւեսցէ. և այլն։

Դպ. Ցիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին աստուծոյ։

Քհ. Ցիշեալ լիջիք. և այլն։ — Մաթց առաջի։

Դպ. Դատ արա ինձ աստուած, և իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում։

Քհ. Ցաղգէ՝ որ ոչ է սուրբ. և այլն։

Դպ. Դու աստուած հզօրիչ իմ ես. ընդէր մոռացար զիս. ընդէր արտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։

Քհ. Առաքեա տէր զլոյս քո. և այլն։

Դպ. Մաթց առաջի սեղանոյ աստուծոյ առաստուած, որ ուրախս առնէ զմանկութիւն իմ։

Քհ. Խոստովան եղէց քեզ. և այլն։

Դպ. Արդ ընդէր արտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ աստուած, խոստովանեա նմա. փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Քհ. Փառք հօր. և այլն։

Դպ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։ — Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։ Օրհնեսցուք զհայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութեան, և երգել զերգս հոգևորս. ամենակալ տէր աստուած մեր, կեցո և ողորմեա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
53-2001
(36122-66)
50397-ուն

Ե՛ յորժամ ելանէ քահանայն 'ի բեմն, երբեայ առնու դպիրն զժամանոցն. մատուցանէ աջ ձեռօք նախ զքէնին, և ապա ընդ ընդարն ասելով. Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Ե՛ եդեալ 'ի տեղոջն զժամանոցն՝ գայ դէպ ծառայն 'ի ձախակողմն քահանային։

Ե՛ 'ի կատարել քահանային զժամամատոյն, ասէ.

Դպ. Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Քհ. Տէր ողորմեա. օրհնութիւն և փառք։ Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Քհ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո տէր։

Քհ. Ցա՛ւրդ աղօթէին ասէ. Զի քո է կարողութիւն և զօրութիւն. և այլն։

Դպ. Պռոսխումէ. Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։ Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։ Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։

Ե՛ յա՛ւրդեալ քահանային զընթերցո՛ւածն,

Դպ. Երէց՝ յայնէ. Ալէլուիա, ալէլուիա, ալէլ։ Քահանայն ասէ զալէլո՛ւիա սաղմոն։

Դպ. Օրթի։

Քհ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութեամբ լուարուք։

Քհ. Սրբոյ ասետարանիս. և այլն։

Դ.Պ. Փառք քեզ տէր աստուած մեր: Պռօսխու-
մէ: Ասէ աստուած:

Դ.Պ. Յաւարտել աւետարանին ասէ. Փառք քեզ
տէր աստուած մեր:

Ք.Հ. Յետ Հաւատամքին, երբ ասէ. Խաղաղութիւն:

Դ.Պ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Ք.Հ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դ.Պ. Առաջի քո տէր:

Ք.Հ. Երբ ասէ. Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիս-
տոս:

Դ.Պ. Օրհնեա տէր:

Ք.Հ. Տէր աստուած օրհնեսցէ զամենեսեան:

Դ.Պ. Ամէն:

Յետ աղօթիցն՝ Ոչ ոք արժանի է, մատուցա-
նէ սպասաւորն ջուր ձեռաց քահանային:

Ք.Հ. Երբ ասէ. Ողջոյն տուք միմեանց, և այլն:

Դ.Պ. Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. որ էնն
աստուած աստ բազմեցաւ: Խաղաղու-
թեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունիս հը-
րաման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ,
սէր ընդ համուրս սփռեցաւ: Արդ պաշ-
տօնեայք բարձեալ զձայն, տուք օր-
հնութիւն 'ի մի բերան միաստական աս-
տուածութեանն. որում սրովբէքն են
սրբաբան:

Ք.Հ. Ահիւ կացցուք:

Դ.Պ. Առ քեզ աստուած:

Ք.Հ. Պատարագ Քրիստոս մատչի գառն աս-
տուծոյ:

Դ.Պ. Ողորմութիւն և խաղաղութիւն, և պա-
տարագ օրհնութեան:

Ք.Հ. Շնորհք, սէր և աստուածային:

Դ.Պ. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Ք.Հ. Ի վեր ընծայեցուցէք զմիտս:

Դ.Պ. Ունիմք առ քեզ տէր ամենակալ:

Ք.Հ. Եւ գոհացարուք զտեառնէ:

Դ.Պ. Արժան և իրաւ:

Ք.Հ. Երբ ասէ. Առէք կերայք:

Դ.Պ. Ամէն:

Ք.Հ. Արբէք 'ի սմանէ:

Դ.Պ. Ամէն:

Ք.Հ. Եւ զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք:

Դ.Պ. Յամենայնի օրհնեալ ես տէր. օրհնեմք
զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն,
աղաչեմք զքեզ տէր աստուած մեր:

Ք.Հ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դ.Պ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Ք.Հ. Որպէս զի եղիցի:

Դ.Պ. Ամէն:

Ք.Հ. Ընդ որս և մեզ:

Դ.Պ. Յիշեա տէր և ողորմեա:

Ք.Հ. Աստուածածնին սրբոյ:

Դ.Պ. Յիշեա տէր և ողորմեա:

Ք.Հ. Սուրբ և աստուածահաճոյ:

Դ.Պ. Յիշեա տէր և ողորմեա:

Իսկ յաւուրս տէրունական տօնից երբ քահա-
նայն ասէ. Օրհնեալ գովեալ, և այլն:

Դ.Պ. Փառք (յարութեան) քո տէր:

Ք.Հ. Եւս առաւել:

Դ.Պ. Շնորհեա տէր և ողորմեա:

Յետ երկար աղօթից՝ երբ ասէ քահանայն.
Եւ եղիցի ողորմութիւն մեծին աստ՛:

ԴՊ. Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։

ՔՀ. Եւ տուր մեզ համարձակաձայն։

ԴՊ. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո. որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա 'ի չարէ։

ՔՀ. Զի քո է արքա՛. Խաղաղութիւն ամենի՛։

ԴՊ. Եւ ընդ հոգւոյդ քում։

ՔՀ. Աստուծոյ երկրպագեսցուք։

ԴՊ. Առաջի քո տէր։

ՔՀ. Քրիստոսիւ Յիսուսիւ. և այլն։

ԴՊ. Պաւսխուսմէ։

ՔՀ. Ի սրբութիւն սրբոց։

ԴՊ. Միայն սուրբ, միայն տէր Յիսուս Քրիստոս 'ի փառս աստուծոյ հօր։

ՔՀ. Օրհնեալ հայր սուրբ աստուած ճշմ՛։

ԴՊ. Ամէն։

ՔՀ. Օրհնեալ որդիդ սուրբ։

ԴՊ. Ամէն։

ՔՀ. Օրհնեալ հոգիդ սուրբ։

ԴՊ. Ամէն։

ՔՀ. Օրհնութիւն և փառք հօր։

ԴՊ. Ամէն. հայր սուրբ, որդիդ սուրբ, հոգիդ սուրբ. օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ՔՀ. Ի սուրբ 'ի սուրբ. և այլն։

ԴՊ. Օրհնեալ է աստուած։

Եւ դինչ ըմպէ Յահանայն ղսո՛ւրբ արիւնն ասելով. Եւ սուրբ արիւն քո, դպէրն Էլանէ մատո՛ւցանէ Յահանայէն ղՔրիստոս։

Իսկ ՝Ն էցեն որ հաղորդեցին, ասասցէ դպէրն. Խոստովանիմ առաջի աստուծոյ ամենակարողի, երանուհւոյ Մարիամու միշտ կուսին, երանուհւոյ Միքայելի հրեշտակապետին, երանելւոյ Յովհաննու Մկրտչին, և սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ամենայն սրբոց, և առաջի քո հայր սուրբ, քանզի մեղայ յոյժ խորհրդով, բանիւ և գործով. վայ ինձ, վայ ինձ և յաւէտ վայ ինձ։

ՔՀ. Ողորմեսցի քեզ, և այլն։

ԴՊ. Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք։

ՔՀ. Հաւատամք. և այլն։

Յետ հաղորդելոյն ասասցէ

ԴՊ. Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ տեառն։

ՔՀ. Կեցո տէր։

Եւ դինչ սուրբ Յահանայն դպրոն. Որ օրհնեալ զայնոսիկ, և այլն։

ԴՊ. Ասէ Էրէց. Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։

ՔՀ. Կատարումն օրինաց և մարգարէից դու ես, Քրիստոս Աստուած, և այլն։

ԴՊ. Օրթի։

ՔՀ. Խաղաղութիւն ամենեցուն։

ԴՊ. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածու-
թեամբ լուարուք։

ՔՀ. Որբոյ աւետարանիս որ ըստ։

ԴՊ. Փառք քեզ տէր աստուած մեր։ Պռօս-
խումէ։ Ասէ աստուած։

Եւ 'ի վճարել աւետարանին՝ ասէ.

ԴՊ. Փառք քեզ տէր աստուած մեր. Սուրբ
խաչիւս աղաչեսցուք զտէր, զի սովաւ
փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ
շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ
տէր աստուած մեր, կեցո և ողորմեա։

ՔՀ. Պահպանեա զմեզ, և այլն։

ԴՊ. Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամե-
նայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։

ՔՀ. Օրհնեալք եղերուք։

Ապա առեալ դպրին զգիրսն 'ի ձեռս, երթայ
առաջի քահանային, և մտանեն յաւանդա-
տուն։

ԳԵՍ-ԱԶԳ ...
ZUUR-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
—
1889

ՀՀ Ազգային գրադարան
NL0695911

th 54
Mp.